

ՍՏՈՒԳԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ
(գրաբարի ազգակցության անունների հիման վրա)

Գ. Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

1. Գիտակարգների կապը. ժամանակակից գիտության զարգացումը բնորոշվում է երկու փոխկապակցված գործընթացներով՝ մի փոքրիկ գիտակարգերի խոր մասնագիտացմամբ, որի շնորհիվ առաջանում են բազմաթիվ նեղ գիտակարգեր, մյուս փոքրիկ՝ լայն ինտեգրացմամբ, որի շնորհիվ ուսումնասիրության առարկաներով բավականին սահմանազատված տարբեր գիտակարգերի միջև առաջանում է փոխներթափանցում, հատկապես՝ մեթոդների փոխառում և արդյունքների կիրառում: Իսկ ուսումնասիրության նույն, նման կամ ինչ-որ կերպ վապված առարկաներ տնեցող գիտակարգերի ինտեգրացումը ոչ միայն հնարավոր է, այլև անհրաժեշտ և հիմք է դառնում նոր միջանկյալ գիտակարգերի ստեղծման համար: Արդի լեզվաբանությունն ու նոր դիտակարգերից արդարևս են, օրինակ, հանրա- և հոգեբանականությունը, ազգագրական ու մարդաբանական լեզվաբանությունը ևն:

Այս գործընթացներից, քննականաբար, մեկուսացած չեն և որևէ գիտության առանձին գիտակարգեր: Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում են լեզվաբանական երեք գիտակարգերի՝ ժամանակագրության, բառակազմության և ստուգաբանության (ավելի լայն՝ պատմահամեմատական լեզվաբանության) փոխներթափանցման ու կախման հարցերը: Ժամանակագրությունը՝ համեմատաբար անկախ գիտակարգ է, մինչդեռ բառի ստուգաբանումն ու բառակազմական բնութագիրն աներևակայելի են առանց գեթ տարրական ժամանակային վերլուծման: Ստուգաբանում՝ առանց ժամանակային հաշվառման, բոլորովին անհնար է, ընդ որում, պետք է նկատի ունենալ ոչ միայն ստուգաբանվող բառի, այլև նրա համար վերականգնվող նախածնի և ցեղակից այլ լեզուներում առկա զուգահեռների նշանակությունները և փաստարկել դրանց ժամանակային կապերը: Բառակազմական վերլուծության դեպքում բաղադրիչների ժամանակ է վերջնականորեն դրանց առանձնացումն ու գործառնությունների սահմանումը (մասնավորապես, առանց ժամանակային կողմի հաշվառման հնարավոր չէ որոշել համանուն հիմքերն ու նրանց խոսքի մասային պատկանելությունը, բազմիմաստ ածանցների գործառնությունները, հիմքերի ու ածանցների զուգորդման պատճառներն ու եղանակները ևն):

Պատկերն այլ է արդի ժամանակագրական հետազոտություններում, որոնք հիմնվում են ժամանակային դաշտերի տեսության, բաղադրիչների վերլուծման մեթոդի և բառիմաստի կառուցվածքային վերլուծության այլ եղանակների վրա: Այս դեպքում ոչ միայն անկարևոր են դիտվում ուսումնասիրության առարկաների (բառերի, առավել ևս՝ տեքստի) ծագումնաբանական ու բառակազմական բնութագրերը, այլև դրանք անտեսվում են՝ իբրև ժամանակների նպատակաուղղված վերլուծությանը խոչընդոտող հանգամանքներ:

Այսպիսով, ժամանակագրությունն անկախ է ստուգաբանությունից ու բառակազմությունից այնքանով, որ վերջիններիս տվյալների անմիջական կառուցվածք չի զգում: Ստուգաբանական և բառակազմական հետազոտություններում պարտադիր կարգով կիրառվում է ժամանակային վերլուծում. ընդ որում, վերջինս, որքան նկատելի են տարբեր ուսումնասիրություններում, չունի որևէ որոշակի մեթոդ և հիմնականում կառավարվում է փնտրիչի կողմից:

Իսկ եթե ստուգաբանելիս, ինտուիտիվ ժամանակային վերլուծությանը զուգահեռ, կիրառվեն ժամանակագրական հետազոտությունների արդյունքները՝ ինչ գործնական նշանակություն վարող են դրանք ունենալ ստուգաբանու-

թյունների համար, ինչպես է արտահայտվում իմաստաբանության և բանականության վաղը, և ի՞նչ գեր կարող է այն ունենալ ստուգաբանելիս:

Այս հարցին քիչ թե շատ համոզվիչ պատասխան տալու համար հարկ է նախ անդրադարձնալ դրանց առաջացման տեսական ու գործնական նախադրյալներին:

2. Իմաստային դաշտերի ճամկողմանի ուսումնասիրություն. սա հակասական դրույթ է, որովհետև իմաստային հետազոտության հաջողության գրավականներից մեկը կենտրոնացումն է իմաստային վերլուծության վրա, մինչդեռ համակողմանիությունը պահանջում է դաշտի անդամների քննարկումը բառագիտական բոլոր հայեցակետերից: Սակայն ձեռնարկելով գրաբարի, մասնավորապես V դ., ազգակցության անունների իմաստային դաշտի համաժամանակյա ուսումնասիրությունը, որոշեցինք կիրառել հենց այս հակասական դրույթը: Դաշտի անդամների ոչ միայն իմաստային, այլև բանականության, քերականական, կիրառական առանձնահատկություններն ու ծագումնաբանական լինելիքները ներկայացնելն ինքնանպատակ չէր, այլև առաջնորդված այն համոզմունքով, որ դասական հայերենի յուրաքանչյուր համաժամանակյա ուսումնասիրություն թերի է, եթե չունի պատմականություն տարրեր¹:

Իմաստաբանական հետազոտության այսպիսի լայն ուղղվածությունը ենթադրում է լեզվաբանական այլ գիտակարգերի մեթոդների ու արդյունքների կիրառումն էս: Անակնկալ չի թվա և հակառակ պնդումը. լեզվաբանական այլ գիտակարգերում կարող են օգտակար լինել իմաստաբանական հետազոտությունների մեթոդներն ու արդյունքները: Փորձենք ապացուցել վերջին դրույթը, ելնելով V դ. հայերենի ազգակցության անունների համակարգի (այսուհետև՝ ԱԱՀ) հնարավորին չափ համակողմանի հետազոտման արդյունքներից:

3. Գրաբարի ազգակցության անունների ծագումնաբանական բնութագիրը. Դրաբարի ազգակցության տերմինները մեծ մասը բնիկ է՝ ունի հնդեվրոպական ծագում: Դրանք ներկայացնում են համակարգում առկա արմատների 65 %-ը, փոխառյալ բնույթ ունի 12 %-ը, հավաստիորեն ստուգաբանված չէ 23 %-ը: Այս քանակական հարաբերակցությունը, հատկապես ԱԱՀ-ի անդամների գերակշիռ մասի բնիկ լինելը, անակնկալ չէ: Ազգակցությունը կենսականորեն կարևոր երևույթ է, հասարակության ներքին կազմակերպման ամենացածր՝ բնականից սոցիալականին անցնելու օղակը, իսկ համապատասխան անվանումները, ինչպես և հիմնական բառաֆոնդի այլ անդամներ, մեծ վաղեմություն և հիմնականում հ.-ե. ծագում ունեցող բառեր են:

Ինչ վերաբերում է շտուգաբանված բառերին, սրանց մի մասը պետք է բնիկ լինի, մյուսը՝ փոխառյալ՝ լայն առումով (ենթա-, առ- և մակաշերտային): Արմատների 23 %-ը ներկայացնող այս բառերից շատերի համար առաջարկված են ստուգաբանություններ, որոնք, սակայն, հավատարմ չեն համարվում հնչյունական կամ իմաստային տեսակետից: Այս տիպի բառերի վերջնական ստուգաբանման համար կարևոր նշանակություն կարող են ունենալ ԱԱՀ-ի ներսում գործող և իմաստաբանական լայն ուսումնասիրության միջոցով բացահայտվող որոշ օրինաչափություններ:

4. Տեսական նախադրյալները. ստորև ներկայացվելիք օրինաչափությունները ԱԱՀ-ի հենց համակողմանի ուսումնասիրության կողմնակի և անակնկալ արդյունքներից են:

Առաջին օրինաչափությունը իմաստային ծավալումների կամ հակադարձ փոխաբերությունների կայունությունն է: Այն հանդես է գալիս նեղ իմաստային շրջապատներում (ԱԱՀ-ի փոքր ենթահամակարգերում), այսինքն՝ լեզվաբանության կառուցվածքում տրոհակի՝ ընդհանրություն անցնող բառերի

¹ Տե՛ս Գ. Հակոբյան, V դարի հայերենի ազգակցության անունները, Թեկնածուական դիսերտացիայի ավտոենթերատ, Երևան, 1987:

միջև. որպես այդ բառերի տարածամասնակյա ու համաժամանակյա իմաստային ծավալումների ու ճյուղավորումների ուղղվածության նույնատիպություն: Լայն իմաստով այս հոմանիշների իմաստային ծավալումների ընդհանրությունն է հայտ է գալիս նույն իմաստային շրջապատը ներկայացնող բառերի ու արմատների նախնական-ստուգականական, բուն և երկրորդային-կիրառական նշանակությունների համադրված ու ամբողջական համեմատություններ: Դաշտի համակողմանի ուսումնասիրության դեպքում նման համեմատության անհրաժեշտությունը ծագում է ինքնաբերաբար՝ նեղ իմաստային շրջապատներին պատկանող բառերի տարաբնույթ (ժամանակի մեջ ու լեզվական արժեքով տարբերվող) նշանակությունների անմիջական համընկնումների պատճառով, որոնք օրինաչափորեն կրկնվում են ողջ համակառուցման արդարացիությամբ:

Երկրորդ օրինաչափությունը բառակազմական տիպերի կայունությունն է: Այն դարձյալ հանդես է գալիս նեղ իմաստային շրջապատում՝ նույնատիպ իմաստային կառուցվածք ունեցող բաղադրյալ բառերի միջև, որոնք, որպես կանոն, կառուցված են նույն բառակազմական կաղապարներով (ածանցավոր բաղադրյալները՝ նաև նույն ածանցներով), առնվազն ներկայացնում են նույն բառակազմական տիպը: Այս օրինաչափությունը նկատելու համար լայն համեմատությունների կարիք չի զգացվել՝ բառակազմական տիպերի ու կաղապարների իմաստային հատկացվածությունն այս կամ այն տիպի ազգակցության անուններ կերտելու գործառույթին ակնհայտ է, անշուշտ, և՛ կիրառվում է դաշտի համակողմանի ուսումնասիրության հակասական դրույթը (իմաստաբանական հետազոտություններում սովորաբար անկարևոր են դիտվում ու վերլուծությունից բացառվում բաղադրյալ բառերը, քանի որ դրանց իմաստը կարելի է հանգեցնել բաղադրիչների իմաստային վերլուծության գումարին)²:

Նշված օրինաչափությունները վերաբերում են լեզվի տարբեր (ենթա) մակարդակներին՝ իմաստային ու բառակազմական, և դրանք կոչեցինք տարբեր տեղանքներով՝ իմաստային ծավալումների կայունություն, բառակազմական տիպերի կայունություն նեղ իմաստային շրջապատում), սակայն կարծում ենք, որ ընդհանրապես են որպես լեզվամտածողության կայունության դրսևորումներ: Դրանք կիրառվեն շուրջ ազգակցության անունների ստուգաբանական վերլուծության համար:

5. Ելակետային տվյալներ. ստորև որևէ նոր ստուգաբանություն չենք առաջարկում: Խնդրո առարկա շուրջ բառերը՝ սկնդիկ, ամուլ, ամուրի, այրի, ունեն ստուգաբանություններ, որոնք հավաստի չեն համարվում իրենց իսկ հեղինակների կողմից:

Սկնդիկ (դրվում է նաև սկնդուկ) նշանակում է «ամուլ՝ այրի՝ կամ ամուսնուց լքված կին», ունի նաև քաղաքացիական ռեպուտացիոն կիրառում՝ իբրև նախատական բառ: ՆՀԲ-ում այս բառը վաղվում է սկնդիկ՝ «փոքրիկ շուն» արմատի հետ (վերջինիս հ.-հ. ծագումն ընդհանուր առմամբ ընդունված է)³, սակայն այս ստուգաբանությունն ուշադրության չի արժանացել հետագա ուսումնասիրողների կողմից: Բառի գրության երկու ձևերը թույլ են տալիս հեշտությամբ առանձնացնել սկնդ-արմատը, իսկ սկնդիկ բառից կազմված նվազականում շեշտակոտույս -ու-ն պետք է հնչյունափոխվեր գաղտնավանկի -ը-ի, հետևաբար հնչյունական տեսակետից այս ստուգաբանությունը խոցելի տեղ չունի, իսկ իմաստային զուգորդման օրինաչափու-

² Տե՛ս օրինակ, W. H. Goodenough, "Componential Analysis and the Study of Meaning, Language, 1956, v. 31, No 1, p. 19.

³ Լեզվական նյութը հիմնականում քաղված է նոր հայկազեան բառգրքից (հ. 1, Երևան, 1979, հ. 2, 1981) և Հայերեն արմատական բառարանից (հ. 1, Երևան, 1971, հ. 2, 1973, հ. 3, 1977, հ. 4, 1979), և հետագա շարադրանքում հղվում է միայն ՆՀԲ, ՀԱԲ, Մյուս աղբյուրները նշվում են առանձին:

Քյունը կփորձենք հիմնավորել ըստ իմաստային ծավալումների վայրենու-
թյան վարկածի:

Հաջորդ երեք բառերը՝ ամուլ, այրի, ամուրի, ևս բաղադրյալներ են, սակայն դրանց կառուցվածքները վերլուծվում են ոչ թե հայերենի օրինաչափություներով, այլ ստուգաբանորեն: Ամուլ բառի համար Գ. Զահուկյանը հարցականով վերականգնում է դ-ոսո-կամ *դ-թո(u)լոս նախածեղ⁴, որը նշանակում է «անզավակ» բառացիորեն՝ «ոչ հղի» (այս նույն -թլ⁴, *թլ -արմատից հայերենում պահպանվել են նաև լի և հղի բառերը, որոնք, ինչպես և *դ- նախածանցը, հավաստի զուգահեռներ ունեն և ցեղակից լեզուներում): Ամուրի բառի համար վերականգնված է երկու նախածեղ. Հր. Աճառյանն այն մեկնում է որպես ժխտական *դ-նախածանցի հավելում *mer- արմատին, որից հայերենում կամ մաբի (<*մն) «էգ թռչուն» բառը, իսկ ցեղակիցներում նաև՝ «երիտասարդ աղջիկ, կին» նշանակող բառեր (ՀԱԲ): Այլ կերպ՝ ըստ Աճառյանի, ամուրի բառի նախնական փմաստն է՝ «ամսիրն»: Իսկ Ն. Աղոնցի կողմից առաջարկված -թալլալ նախածեղը նշանակում է «սնողավակ»: այս ձևը վերցրել ենք Գ. Զահուկյանի «Հայոց լեզվի պատմություն» աշխատությունից, որտեղ այն անվերապահորեն ընդունելի չի դիտվում⁵: Ի վերջո, այրի բառը ստուգաբանում է Ժ. Դյումեզիլը -դ-դեռլա- նախածեղով, բառացի՝ «անամուսին, անտղամարդ»⁶:

Այս ստուգարանությունները կասկածելի են համարվում ցեղակից լեզուներում անմիջական զուգահեռների բացակայության պատճառով: Հիշենք, որ բառի հ.-ե. ծագումն ապացուցելու համար հարկ է՝ ա) վերականգնել նախաձև՝ ըստ հնչյունական զրեհների, բ) գտնել ձևադիմ-հնչյունական համո-շիշ զուգաբանություններ՝ ցեղակիցներում, գ) գտնել իմաստային զուգորդման համադրիչ, փաստարկում: Զուգաբանությունների բացակայության դեպքում նախաձևը մնում է ձգձգ բարբառոյ յանապատի» և պահանջում է որոնել ստուգաբանությունների ապացուցման փոփոխակի փաստարկներ՝ բառերի իմաստային-բառակազմական կառուցվածքում և նրանց անմիջական իմաստային շրջապատում: Այդ նպատակով ամբողջացնենք երևանատային տվյալները՝ խնդրո առարկա բառերի համաժամանակյա (V դ.) բնութագրով:

Սկեզդիկ, այրի, ամուլ, ամուրի բառերը միասնորված են ԱՍՀ-ի նույն՝ ոչ կենտրոնական ենթահամակարգերից մեկում, որպես ազգակցություն հակադիր եզրի բացակայություն ցույց տալով տերմիններ: Այրի բառն անվանում է «այր-կին» փոխհարաբերության իգական եզրի վիճակը՝ «այր» եզրի մահվան դեպքում. պայմանականորեն բառիմաստը կարելի է արտահայտել հետևյալ բանաձևով՝ այրի = (կին $\rightarrow$ X): Ամուրի բառն անվանում է նույն փոխհարաբերության արական եզրի վիճակը կնոջ բացակայության դեպքում, հիմնավորումը՝ դեռևս չամուսնացած, այսինքն՝ «ամուրի = (այր $\leftarrow$ կին)»: Ամուս բառն անվանում է «ծնող-զավակ» փոխհարաբերության «ծնող» եզրի վիճակը զավակի բացակայության դեպքում, պատճառը՝ բնական, ոչ հարատև հատկանիշ այսինքն՝ «ամուլ = (ծնող $\rightarrow$ X)»: Սկեզդիկ-սկեզդուկ բառի իմաստային կառուցվածքն ավելի բարդ է՝ «(X $\leftarrow$ կին) = սկեզդիկ = (մայր $\leftarrow$ X)»: այսինքն՝ եթե առաջին երեք բառերը մենիմաստ են, ցույց են տալիս մեկ բացակայություն և մեկ պատճառ, ապա վերջինս՝ երկու բացակայություն (զավակի, ամուսնու) և երեք պատճառ (ամուլություն և մահ կամ ապահադրան): Այսպիսով, սկեզդիկ բառը բազմանշանակելի է և ալլընտրանքային, մյուսներից տարբերվում է նաև բացասապես ռմասվորված փոխաբե-

⁴ Տե՛ս Գ. Բ. Զահրուհյան, Հայոց լեզվի պատմություն. Նախադրային շրջան, Երևան, 1987, է. 145, 242:

Ե ՏԵ՛ս նույն տեղում, է, 188:

⁶ ՅԷ՛՛՛՛՛՛՛ Տւմէզիլ, Series etimologiques armeniennes, Bulletin de la Societe de Linguistique de Paris, 41, 1940, p. 69.

րական կիրառությամբ՝ իբրև նախատական բառ (հմմտ. Առաջի մեծամեծաց իմաց հանդիմանեաց զիս իբրև սկնդուկ մի. Բուդ.):

6. Խնդիր առաջին. Սկնդիկ-սկնդուկ բառի ստուգաբանությունը կարելի է ներկայացնել որպես հետևյալ լեզվաբանական խնդիրը: a իմաստն ունեցող * A նախաձևից ցեղակից լեզվաներում (որոնք համարակալվում են որպես զուգաբանությունների ցուցիչներ) կան A^1 , A^2 , A^3 , ... « Δ ները՝ a^1 , a^2 , a^3 » իմաստային նրբերանգներով, բայց ընդհանուր առմամբ նույն a նշանակությամբ: Պայմանականորեն № 4 ցեղակից լեզվում կա ($A^4 + S$) b ածականավոր բառը, որի b իմաստը բավականին հեռանում է a իմաստներից: Պահանջվում է ապացուցել, որ $a \rightarrow b$ իմաստային անցումն օրինաչափ է. կամ՝ որ $b = a$:

Խնդրի լուծման համար անհրաժեշտ է. ա) a և b իմաստներից յուրաքանչյուրի իմաստային շրջապատների համագրական համեմատություն, բ) a և b իմաստներով արտահայտվող իրույթների (ռեալիտետների) համադրական համեմատություն: Եթե ըստ լեզվական և իրական զուգորդումների (անկախ վերջիններիս քանակից ու դասավորությունից) a և b իմաստները հանգում են իրար, փնդիրն ապացուցված է:

* Aa նշանակված նախաձևը հ.-հ. * α և α «շուն» արմատն է, որից ունենք հուն. $\kappa\epsilon\upsilon\sigma$ «շուն», ռուս. $\psi\gamma\kappa\alpha$ «էգ շուն», գերմ. $\psi\alpha\upsilon\psi$ «շուն», հայ. շուն, սկոնդ⁷: ($A^4 + S$) b նշանակված է սկնդիկ կամ սկնդուկ բառը, կազմված սկնդ- արմատից և -ուկ, -իկ նվազական ածանցներից: Հնչյունական օրենքների տեսակետից այստեղ, կարծես թե, տարակույս չկա՝ Խակ ինչպես են կապվում «այրի կամ լքված ու ամուլ կին» և «շուն (նվազական-քամահ-րական և ոչ փաղաքշական)» իմաստները:

Լեզվական, իմաստային զուգորդումները միշտ կապված են արտալեզվական իրականության, մարդկանց կողմից առարկաների ընկալման, գնահատման և համեմատության հետ: Հետևաբար, նախ համեմատենք խնդրո առարկա իմաստներով նշանակված իրույթները՝ շուն և ամուլ ու անամուսին կին, շնոռնալով, որ խոսքը վերաբերում է այդ իրույթների ընկալմանը մեզնից առնվազն երկու հազարամյակ առաջ: Աշխարհում գոյություն ունեն ազգակցության համակարգերի բազմաթիվ տիպեր, որոնք թնդհանրապես ու տարբերվում են որոշակի հատկանիշներով: Ըստ Կ. Լևի-Ստրոսսի, դրանց նվազագույն պարտադիր և ընդհանրական տարրը փոխանակումն է տղամարդկանց երկու խմբերի միջև⁸, իսկ նպատակը, բնականաբար, սերունդի շարունակումը: Այսպիսով, կինը մեծ քանած դարաշրջանում փոխանակման առարկա է, ազգակցության շարունակման և սերնդափոխության միջոց: Առվածը բնականաբար, ենթադրում է, որ կինը պետք է «տեր» ունենա՝ նախ ծնող, հայր, ապա և ամուսին: Ընդ որում, «սկնդիկին» դեպքում ընդգծվում է ամուսնու «ավարտված գոյությունը», որն արդեն հետին պլան է մղում հոր գոյությունը: Այստեղից դժվար չէ զուգահեռ անցկացնել անամուսին (տեր չունեցող) և անզավակ (օրինական սերնդի շարունակմանը չծառայող)⁹ կնոջ և քամահլված՝ անտեր ու ավելորդ շան միջև:

Այժմ անցնենք սկնդիկ բառի իմաստային շրջապատին: Սկնդիկ բառը չի հանդիպում միջին հայերենով ավանդված բնագրերում: Հակված ենք ենթադրելու, այս բառը շարունակել է կիրառվել բանավոր խոսքում, սակայն ձեռք է բերել այնքան սուր նախատական երանգ, որ թարգմանվել է գրավոր խոսքում: Հայերենում ունենք ևս չերկու բառ, որոնց իմաստային կառուցվածքում

⁷ Տե՛ս Գ. Բ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 134, М. Фасмер, Этимологический словарь русского языка, т. 3, М., 1987, с. 798.

⁸ К. Леви-Стросс, Структурная антропология, М., 1983, с. 47—48.

⁹ Սկնդիկ կարող է և զավակներ ունենալ, որ կարծես խտացնում է կերպարի բացասականությունը արական գծով սերնդափոխության պայմաններում, հմմտ. «...զի բազում են որդիք սկնդիկի առանկ քան դարամուտն» (ՆՁԲ):

առկա է «շուն» — նախատական բառ վանանց համար իմաստային անցումը: Քաժ բառը հնագույն վկայություններում (XIV—XV դդ.) կիրառված է «էգ շուն կամ ալ կենդանիների էգը» նշանակությամբ: Բարբառներում պահպանվել է «էգ շուն» և կամ նախատական բառ կանանց համար (Սուլավայի բարբառում՝ «անամթ աղջիկ»): Քէնթ բառը ևս հնից վկայված է «էգ շուն» նշանակությամբ (Վստկ.): Անտիոքի Քեսաբ գյուղում պահպանվել է «աղջիկ» իմաստով, իսկ մի շարք բարբառներում կիրառվում է բառի՝ ֆոնթի գալ բաղադրյալը, «էգ շան ցանկությունից կատաղելը» նշանակությամբ:

Նկատի ունենալով լեզվամատածողության կայունությունը, վերացարկները այն հանգամանքը, որ սկնդիկ, ֆաժ, ֆէնթ բառերը պատկանում են տարբեր համաժամանակյա կտրվածքների և համեմատներ նրանց իմաստային կառուցվածքները: Ծթն սկնդիկ իրոք հավասար է սկ(ու)նդ + նավազական, ապա սկնդիկ-ի նախնական «շուն» իմաստը համընկնում է ֆաժ ու ֆէնթ բառերի բուն նշանակության հետ, իսկ վերջիններիս բացասական ոճավորված կիրառումը (անվանարկված, հանրույթի փողմից մերժված փնոջ անվանման համար)՝ սկնդիկ բառի շուն նշանակության հետ (գրաբարում): Սկնդիկ քառի իմաստային կառուցվածքի հետ ավելի անմիջական զուգահեռ են ներկայացնում սլավոնական լեզուները. արդի ռուսերեն сукка «անբարոյական կին», քարշ. ակոդա և պոլարերեն suko նույն նշանակությամբ¹⁰, Այս անմիջական զուգահեռներին վարենյի է ավելացնել ևս երկու իմաստային ճյուղավորում. աստվածաշնչյան հայտնի պատգամը՝ «մի շնանա» և հունարեն κούβ «շուն» բառի փխբ. կիրառումը՝ «սխալ քայլ» նշանակությամբ:

Շուն բառի իմաստային ծավալումն ավարտներ հոմանիշների մի շարքով, որի անվանած միակ հատկացությունը ապօրինի զավակն է՝ նույնպես մերժված հանրույթի կողմից. հաբնորդի, աղջկորդի, բոգնորդի, պոռնկորդի, շնորդի: Ինչպես տեսնում ենք, «հատկացուցիչ-հատկացյալ» թառակազմական կաղապարը տվյալ դեպքում հանդես է դալիս որպես իմաստային շրջապատ, որտեղ շուն-արմատի հոմանիշներն են հաբն (երկրորդական կամ ապօրինի կին), աղջիկ (գրաբարում նաև՝ «անբարոյական կին»), և հատկացուցիչ դերում հանդես եկող մյուս բառերը: Այսպիսով, «շուն» — անբարոյական կին» իմաստային անցումը միանգամայն օրինալի է: Իհարկե, սկնդիկ բառի իմաստը ավելի բարդ է ու լարն, սակայն նախ՝ լոնգհանուր առմամբ նրա կիրառությունը հնագույն է հենց այդ իմաստին, և ապա՝ յուրաքանչյուր դարաշրջան ունի բարոյականության իր չափանիշները, որոնցից էին փնոջ՝ օրինական զավակ ու ամուսին ունենալը:

Այժմ ներկայացնենք սկնդիկ բառի իմաստային շրջապատը ԱԱՀ-ում, որը կամբողջացնի իդական սեռի ամձի սոցիալական-ազգակցական դիրքի ընկալման պատկերը հին հայերենում: Մայր. սա իդական եզր. անվանող միակ տերմինն է, որի բառիմաստում ոչ միայն չկա ոչ մի բացասական և անիրական (դիցական) իմաստություն, այլև նրա իմաստային կառուցվածքում առկա լրացական իմաստությունները սոցիալական կյանքի ալլ բնագավառ չեն շոշափում և բառին հաղորդում են դրականորեն նշույթավորված «գլխավոր, կարևոր» որոշչային կիրառությունը (հմտ. մայր աթոռ, մայր դարպաս են): Կին. այս տերմինն անվանում է ոչ միայն «որևէ մեկի կին» ազգակցական փոքր, այլև իդական եզրի չափահաս անձի լոնգհանուր անվանումն է. աղին-րևաբար, վերջինս ալլ վերալ չի ընկալվում, քան որպես որևէ մեկի կին, այլայպես լեզվում վստեղծվելին համապատասխան անվանումներ¹¹, Կին բառը

¹⁰ Sб'а M. Ф. Фасмер, Նշվ. աշխ., հ. 3, էջ 798.

¹¹ Հայերենում երկու անգամ արձանագրվել են լոկ ազգակցական կին եզրը անվանող բառեր՝ եղաբ (V դ.) և խղաբ (XIV դ.), սակայն սրանք ընդհանրական կիրառում ձեռք չեն բերել՝ անհրաժեշտ չեն եղել (հմտ. հ.-հ. ալլ լեզուները, որոնց բացարձակ մեծամասնությունը վերացրել է *qu na -նախաձևի շարքերակվածությունը. օրինակ, անգլ. woman-wife, ռուս. жена-женщина, իտալ. donna-moglie, բայց. Իսպ. mujer բառը, ինչպես և հայերեն կին-ը. ընդհանրացնում է «կին» և «որևէ մեկի կին» նշանակելիները):

կան ձևի կայունությունը՝ բառակազմական տվյալ տիպի ու կաղապարի արդյունավետությունն ու իմաստային հատկացումը տվյալ իմաստային շրջապատին, գ) բաղադրյալի սերտաճման օրինաչափությունը, դ) նախաձևի բառացի նշանակությունից ստուգաբանվող բառի նշանակության առաջացման օրինաչափությունը:

ԱԱՀ-ում օրինաչափորեն գործող բառակազմական տիպերի կայունությունը դրսևորվում է որպես բառակազմական տիպերի ու կաղապարների որոշակի իմաստային քեռնվածություն ԱԱՀ-ի առանձին ենթահամակարգերում և տվյալ տիպի ազդակցության անունները կերտելու գործառույթ: Վերջինս հատկապես ակնհայտ է այն իմաստային դիրքերում, որոնք լրացվում են կառուցվածքով բաղադրյալ բազմաթիվ համանիշներով, օրինակ, ԱԱՀ-ի՝ հակադիր եզրի բացակայություն ցույց տվող անունները կառուցված են «անժխտական նախածանց + հակադիր եզրի անուն (երբեմն նաև + վերաբերություն ցույց տվող ածականակերտ ածանց)» կաղապարով, հմտ. անոդի, անգալակ, անժառանգ, անծին, անսեր(մն), անգալակունի, անծնեղական, անհր, անկին, անամուսին, անաբանց, անամուսնացեալ, անհաբուսնացեալ: Ըստ թվական տվյալների, նշված իմաստային դիրքում կազմությամբ բաղադրյալ 21 հիմնական անդամներից 9-ը (և բազմաթիվ լրացական անդամներ) այս բառակազմական տիպի իրացումներ են, իսկ մնացած 12 տերմինները բաղկավոր են չորս տարբեր բառակազմական տիպերում: Ընդ որում ավելի արդյունավետ է երկբաղադրիչ-վերջածանցազուրկ տարբերակը, իսկ եռաբաղադրիչ կաղապարով նորակազմությունների կերտումը գործնականում զարգարում է միջին հայերենում: Ըստ այսմ կարող ենք ասել, որ բառակազմական կաղապարը լեզվական կայուն ձև է և, անկախ կոնկրետ իրացումների գործածվելուց կամ սերտաճելուց, լեզվակիրների մտածողության մեջ պահպանվում է որպես բառաձևերի ընկալման ու ներքին իմաստի որոշման միավոր¹³:

Առաջարկված երեք նախաձևերն էլ հանգում են «ծխաական նախածանց + ցական եզրի անունը (+ ածականակերտ)» կաղապարին, և դրանց հավաստիությունն ապացուցող կարևորագույն փաստարկը այս կաղապարի իմաստային հատկացվածությունն ու արդյունավետությունն է ԱԱՀ-ի՝ հակադիր եզրի բացակայություն արտահայտող իմաստային դիրքում՝ V դ. և նրա շարունակվող գործառույթը՝ համապատասխան նորակազմությունների ի հայտ գալը, հետագայում, Պատմահամեմատական լեզվաբանության հանրահայտ օրենքներից մեկը հավաստում է, որ հին ձևը՝ տվյալ տեղում վաղապարի եռաբաղադրիչ տարբերակը, ավելի վաղ է դուրս մղվում կերտումից: Այս հարցում թերևս դրսևորվում է նաև հայերենի՝ թեքականությունից պակասականության անցնելու միտումը: Ինչևէ, ԱԱՀ-ում նշված կաղապարի արդյունավետությունը և նրա հատկացումը հակադիր եզրի բացակայություն ցույց տվող անունների կերտմանը վկայում են, որ նույն իմաստային դիրքի տերմինները կարող են նույն կաղապարի իրացումները լինել ստուգաբանորեն, այսինքն՝ ունենալ անվանման նույնպիսի (նախնական) պատճառաբանվածություն, փնչպես նույն իմաստային դիրքը զբաղեցնող բաղադրյալ տերմիններն ու հոմանիշները՝ V դարում:

Արդյոք չափազանցված չէ՞ բառակազմական կաղապարի դերը մեր կողմից: Բառակազմական ձևիմաստային միավորի կայունությունը հիմք ընդունելով՝ նախաձևի փոկությունը հավաստելը չի՞ հակասում արդյոք համապատասխան զուգաբանությունների բացակայությանը (հայտնի) ցեղակից լե-

¹³ Այս իմաստով բառակազմական տիպը, կաղապարը և վերջինիս տարբերակները կարելի է դիտել որպես կոնկրետ բովանդակությունից վերացարկված և տվյալ իմաստային շրջապատին պատկանող միայն իմաստային միավորներ, որոնց ծավալումների (նորակազմությունների ստեղծման) կայունությունը նույն բնույթի ունի, ինչ իմաստային (իմաստափոխական) ծավալումների կայունությունը:

դուներում: Սակայն նախ՝ թուուցիկ հայացքն իսկ բավարար է համոզվելու համար, որ * (nAs) կաղապարը գործում է նաև այլ հ.-հ. լեզուների ազգակցության անունների շարքում (օրինակ. бездетный, незамужняя, unmarried և այլն), և ապա, կրկնենք, որ նախաձևերի բաղադրիչները հավաստիորեն հ.-հ. են: Ե՛վ կաղապարի, և՛ բաղադրիչների պահպանումը տարբեր լեզուների լեզուներում ենթադրում է, որ որևէ լեզվում (տվյալ դեպքում՝ հայերենում) արդ կաղապարը կտրուղ էր իրացվել հենց այդ բաղադրիչներով, որոնք սերտաձևի են ժամանակի ընթացքում¹⁴:

Բաղադրյալ Վյազմուխյանների ընդհանրական հատկանիշներից անկրկնորեն սերտաձևում է ժամանակի ընթացքում, որը ստվորաբար ուղեկցվում է արտաքին-հնչյունական և պարտադիր կարգով՝ իմաստային փոփոխություններով: Ընդ որում նման իմաստափոխություններն ունեն ընդհանուր ուղղվածություն. բառը կազմող բաղադրիչներով պատճառաբանված, բառացի նշանակությունը մղվում է հտին պլան, և բաղադրյալը ձևով է բերում առաջնային՝ բաղադրիչներով անմիջականորեն չպատճառաբանված, լեզվակիրների համար ապրիորի նշանակություն: ԱԱՀ-ից կարելի է բերել նման բազմաթիվ օրինակներ, այսպես գրաբարյան քնկեցիկ (լքված, արհամարհված աճ, նաև ծնողներից լքված մանուկ), կնքանայր (մկրտող հոգևորական կամ կնունքի քալոր), բառեկամ (բառի կամեցող, որևէ մեկի նկատմամբ լավ տրամադրված) բառերը առանց որևէ արտաքին փոփոխության իմաստափոխվել՝ տեղափոխվել են արդի հայերենում, իսկ բարբառային մեծաբ՝ «տատա», «ամամ» «կնքանայր» բառերում նկատելի է մեծ մայր և կնքանամ բաղադրիչների սերտաձևումը: Այսպիսով, մեղ հետաքրքրող ամուլ, ամուլի, այրի բառերի թե՛ ստուգաբանական-բառակազմական կառուցվածքը և թե՛ սերտաձևումն ու մենիմաստացումը, տեղափոխվում բազմաթիվ զուգահեռներ ունեն ԱԱՀ-ում, կառավարվում են նրա ներքին (թերևս այլ իմաստային դաշտերի ևս բնորոշ) օրինաչափություններով:

Ամուլ տեղափոխվում է զավակ ունենալու անկարող աճ, ավելի հաճախ՝ կին, փոխաբերաբար կիրառվում է «անպտուղ, անբերրի» իմաստով: Նշել ենք, որ տեղափոխի նախնական բառացի իմաստն է՝ «ոչ հղի», որի արձագանքն է, հավանաբար, բացարձակ անզավակություն կատարողի իմաստով թի բացակայությունը բառիմաստում: Այն արտահայտում է մասնականակոր, բայց որևէ ժամկետով չսահմանափակված հատկություն, հմմտ. «Ամուլն ծնալ եօթն», ինչպես և ամուլի բաղադրյալը:

Ամուլի տեղափոխի համար երկու ստուգաբանություն է առաջարկված, որոնցից մեկը հանգում է «անկին», իսկ մյուսը՝ «անզավակ» իմաստին: Ազգակցության անունների իմաստային ճյուղավորման համակարգված ուսումնասիրումը թույլ է տալիս անվերապահորեն ասել, որ «անզավակ» իմաստը երբեք չի հանգում «անկին, չամուսնացած» իմաստին, նման իմաստափոխությունն ոչ միայն որևէ օրինակ, այլև միտում չկա V—XX դդ. ընթացքում իմաստափոխված բազմաթիվ ազգակցության անունների շարքում: Միակ բառը, որ զուգակցում է «անզավակ» և «անամուսին» (ոչ թե «անկին» իմաստները, սկզբից է, և ակնհայտորեն նման զուգակցումը բնորոշ չէ հայերենի լեզվամտածողությանը՝ հետագայում ոչ մի այլ բառում այն չի կրել:

¹⁴ Հետաքրքիր նյութ է տալիս գրաբարի ազգակցության անունների պահպանման օրինաչափությունը հայերենի բարբառներում, որը կարելի է համեմատել հ.-հ. այսպես կոչված նախալեզվի ու զուստր լեզուների տվյալների հետ: Թեև հայերենի ԱԱՀ-ն էական փոփոխությունների չի ենթարկվել գրավոր զարգացման պատմության ընթացքում, բաղադրյալ ազգակցության անուններից շատ քերն են պահպանվել բարբառներում, այն էլ հիմնականում սերտաձև (օրինակ, հօրեղբայր→հօղբար, հօրեմայր→հօմու), սակայն բարբառներում նույն (V դ.) բառակազմական կաղապարներով ու նույն բաղադրիչներով ստեղծվել են տեղային, նորակազմություններ (օրինակ, առն Թալ—մարդի Թալ, կին Թալ—կին բերել և այլն):

կրնվում: Այսպիսով, մենք մերժում ենք ամուրի բառի համար վերականգնը-
յոց *nutritio- նախաձևը: «Անկին» նշանակությամբ նախաձևը Հր. Աճառ-
յանը ՀԱԲ-ում չի բերում, նշելով միայն ժխտական *n- նախածանցը և *mer-
արմատը: Այգ նախաձևը, մեր կարծիքով, կարող է ունենալ հետևյալ տեսքը՝
nutritio- (ցեղակիցներում փան միայն բաղադրիչները, թեև անծանոթ է
*mr-, *mer-արմատի *mor-ձայնադարձը), որը հայերենում պետք է տար
ամուրի: Այս տերմինը գրաբարում նշանակում է «դեռևս չամուսնացած տղա-
մարդ», ունի նաև որոշակի կիրառություն՝ այս բառի հետ և հաղվադեպ վկա-
յություններ ասյրի տղամարդ իմաստով (ՆՀԲ): Այս երկու կիրառություններն
էլ փաստարկում են բառի նախնական «անկին» նշանակությունը (այն փաս-
տորեն դեռ լրիվ չնջված չի եղել ընդավերջների հիշողություններից): Իսկ ինչու է
բաղադրյալ նախաձևի տերմինացումն ընթացել հենց այս ուղղությամբ՝
«դեռևս չամուսնացած»: Այս հարցի պատասխանը ևս տալիս է իմաստային
շրջապատը, որտեղ չկա կին եզրի բացակայությամբ պայմանավորված տղա-
մարդու վիճակն արտահայտող որևէ այլ չպատճառաբանված անվանում՝
տերմին: Ամուսնալուծված տղամարդու անվանումները բաղադրյալներ են,
իսկ ասյրի տղամարդ իմաստով հատուկ տերմին չկա բոլորովին: Բացառ-
ման մեթոդով կարելի է ասել, որ տղամարդու համար վնոջ թացակայության
միակ կարևոր համարվող սոցիալական-ազգայական վիճակը հիմնավոր-
վում է դեռևս ամուսնացած չլինելու հանգամանքով, ավելին, այդիսանպով,
տղամարդը կրկին վերադառնում է դեռևս չամուսնացած՝ «ամուրի» վիճակին,
մինչդեռ փինը ձեռք է բերում նոր սոցիալական վիճակ՝ «այրի»:

Այրի տերմինը էական իմաստափոխության չի ենթարկվել, գրաբարում
նշանակում է «ամուսինը մեռած կին», այժմ փիրառվում է նաև «կինը մե-
ռած տղամարդ» իմաստով¹⁵, որ, թերևս, արդյունք է ոչ անբան կյանքի դե-
մոկրատացման ու վնոջ ազատագրման, որքան այլ վեզուների համապատաս-
խան տերմինների ազդեցությամբ (անգլ. widow, իտալ. vidova, ռուս. вдов-
ица և այլն): Վերականգնված նախաձևը, ինչպես և նախորդները, ունի պարզ
ժխտման նշանակություն՝ «անամուսին», ավելի ճիշտ՝ «անտղամարդ»: Ին-
չո՞վ է պայմանավորված բառի մեղմաստացման ուղղությունը: Նախորդ շա-
րադրանքի ֆոնի վրա կարելի է ասել, որ վնոջ ոչ միայն ընտանեկան, այլև
սոցիալական դիրքն ու դրությունը փոխվում են ամուսնու մահից հե-
տո, մի փոփոխություն, որ հասարակական լեզվամամբ համարժեք է որբաց-
մանը¹⁶: Բնական է, որ նման հատուկ վիճակին քեզվում պետք է հատկացվեր
հատուկ տերմին՝ այսինքն:

8. Ամփոփում. իմաստաբանական, ստուգաբանական ու բառակազմա-
կան հետազոտությունների ներթափանցումը հաճախ հանգեցնում է հետա-
քրքիր ու անսպասելի լուծումների: Տվյալ դեպքում նկատի ունենք ոչ թե
սկզբից, ամուլ, ամուրի, այլ բառերի ստուգաբանումը (որոնց համար առա-
ջարկված են նաև այլ այս հոգվածում չբերված ձևեր), այլ առկա ստուգա-
բանությունները համոզիչ դարձնելը: Դրանց հավաստիությանն է հանգեցնում
ԱԱՀ-ում (ամենայն հավանականությամբ՝ և այլ իմաստային համակարգե-
րում գործող) իմաստային ու բառակազմական ծավալումների կայունու-
թյունը:

¹⁵ Աճառյանը նշում է բառի մեկ գործածություն այս իմաստով Աստվածաշնչից (ՀԱԲ, Գ. 1, էջ 176):

¹⁶ Հիշենք, որ բառը բարբառներում պահպանվել է լոկ ուրբալի բաղադրյալ կազմում, պարզապես «այրի» նշանակությամբ, հմտ. նաև հետևյալ շարքը. ուրբաճոց, այրեճոց, աճեճ-
լեճոց, ծեռեճոց:

ЭТИМОЛОГИЯ НА УРОВНЕ СЕМАНТИЧЕСКИХ СИСТЕМ (на основе имен родства древнесармянского языка)

Г. В. АКОПЯН

Р е з ю м е

На основе семантического и словообразовательного анализа структуры и семантического окружения ряда имен родства подтверждается истинность предложенных для них разными исследователями и.-е. праформ, которые не считались достоверными ввиду отсутствия параллелей в других родственных языках. Убедительность этих этимологий аргументируется стабильностью закономерных словообразовательных и семантических дериваций.